յառաջդիմութեան ինչ ունէր ծանօթութիւն յաղագս զՏեղեփոսն բառնալոյ, և ոչ սովորական ընդ այն վարել ուղեղնայութեան։ Եւ թէպէտ տացեալ ըստ անցից դիպուածոյն արդեօք կայցի զանցի, սակայն զամօթանացն յայտերևակի դիտութեանն՝ աներևելիս պարտ էր առնել, և ոչ հրապարակագոյժ ինքեամբ գլուխն 'ի մէջ ածել կորանելոյ։ Եւ գլուխ առասպելաբանութեանս այս. քանզի սովորութիւն է վեհիցն՝ և անդ ըստ օրինադրեալ մարդկան, զպոռնկացեալսն և զբոլորովին անօրինեալս՝ չարաչար տանջանօք բառնալ 'ի միջոյ. և ոչ թէ նոցին հրամանօք քաղաքարնակ լինելով, և կրկնաբախտիկ բախտի եղանել տուիչք։ Այլ և այն պատմեալս և Տեթրայն իսկ, յոյժ անօգտակարագոյն էր, թագաւորին և երջանկութեամբ վայելչացելոյն՝ խարդաւանացն զուգել ամուսին, և զնորին խոյգոյութեանն զարմ՝ թագաւորութեանն յուցանել ժառանգաւոր, որ նմա 'ի ներքնոցն միանգամայն և յարտաքնոցն՝ զանբարգաւաճագոյնսն 'ի վերայ հանապազ հանդերձ պատկառանօք այլ և տալ չառագունանս։

Իսկ պատմութիւն՝ որ այսգունակ 'ի սկզբանէ մինչև 'ի ծայր ստութեամբ է զանգեալ, և ամենևին կախարդական պատրանօք, և ոչ սուղ ինչ մասամբ զճշմարիտն կալեալ կարծիս 'ի սմանէ, ապա ո՞րք ոչ դժուարեալ 'ի բաց դարձուցանիցէ զդէմս, և բնաւին հրաժարեալ անյիշատակ զամբարշտութեանս առնիցէ բերս։

Շարունակելի

Հ. Ս. Ս.

ՀՐԱԺԵՇՏ Ի ՍԻՐԵԼՒՈՅ

Սիրովդ վառեալ, իմ նազելի,
Զափաբերական բանս տացի.
Ունկնդիր զսա 'ի քոյ պահեստի
Զի մի ումեք տեսանիցի։
Անուն իմ սոսա բաղձիւսեացի
Սկզբնատառիցըս չափակցի.
Վառըն սիրոյն մեր 'ի միջի
Զայս յիշատակ քեզ մատուցի։
Միայն 'ի քէն այս ինչ խնդրի՝
Զի ունիցիս զիս 'ի մըտի,
Թէ էր ոմըն զոր սիրէի,
Ըստ իմ անձին, որպէս ասի։
Ունելն իմ քեզ միշտ 'ի մըտի
Զէ ինչ ծածուկ և ոչ գաղտնի,
Այլ պարզ դիւրին ճանաչելի.
Որպէս քեզէն ես վըկայի։

Անմեղադիր լինել խընդրի
Իմ յանցանացս թէ և լիցի.
Բորեալ մնացես, իմ սիրելի,
Քանզի երթամ յերկրէ աստի։
Ո՜հ. թէ կեանքն իմ բուեսցի,
Տէր արասցէ արժանի
Տեսոյդ կըրկին, իմ սիրելի,
Ի համբուրել քեզ գըգուելի։
Լինիմ յայնժամ ես զուարճալի
Ցանկարծահաս խընդութեամբ լի,
Լընլով կարօտոյս վաղեմի
Փոքրիկ կէտում ու այն բոպէի։
Ո՜հ, թէ ներհակն պատահեսցի,
Փոխիլ մահուամբ կենաց աստի,
Մի մըռմեսցիս, իմ ցանկալի,
Այլ փառս մատո՛ տեառն Արարչի։

ՆՈՐ ՔՆԱՐ

digitised by A.R.A.R.@